



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

21.06.2022թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հունիսի 21-ը նշվում է որպես Բուժաշխատողի մասնագիտական տոն, ինչի կապակցությամբ ուզում եմ շնորհավորել հատկապես Կոտայքի մարզի բոլոր բուժաշխատողներին՝ բժիշկներին, բուժքույրերին, բուժակներին, մայրապետերին և, առհասարակ, առողջապահական համակարգի բոլոր աշխատակիցներին:

Բուժաշխատողի աշխատանքը միայն աշխատանք կոչել անհնար է. այն առաքելություն է, ինչը պատվով կատարելը յուրաքանչյուր բուժաշխատողի համար պետք է լինի առաջնային և կարևոր՝ հանուն իրեն դիմած քաղաքացու առողջության պահպանման և կյանքերի փրկության:

Միրելի՛ բուժաշխատողներ,
Ձեզ պիտի մաղթեմ ուժ, կորով, համբերություն ձեր դժվարին, բայց պատվաբեր և անձնուրաց առաքելությունն իրականացնելիս. միաժամանակ շնորհակալություն եմ ուզում հայտնել բոլոր այն բուժաշխատողներին, ում համար մարդկային կյանքը վեր է ամեն ինչից:

Շարունակեք նույն ջերմությամբ, հոգատարությամբ կատարել ձեր շուրջօրյա ծառայությունը և հավատացած եղեք, որ առողջապահական ոլորտին ուղղված բարեփոխումները պետության առաջնահերթությունն են և արվում է առավելագույնը, որ այդ բարեփոխումներն օր առաջ հասնեն մեր մարզի բացառապես բոլոր բուժաստատություններ:

Առանձնահատուկ շնորհավորում եմ ուղարկում բժիշկներին և սահմանամերձ բնակավայրերի մեր բուժաշխատողներին:

Առողջություն ձեզ և ձեր ընտանիքներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ